Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«____» _____ 2010թ. N _____Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N120-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՈՒՄ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ա) ենթակետին, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է.***

1. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի հունիսի 18-ի «Արմենիա Ջեստիոնե» փակ բաժնետիրական ընկերության վարձակալությանը գույք հանձնելու մասին» N120-Ա որոշումը:

2. Սահմանել Երևան համայնքի կողմից Ազատության հրապարակում գտնվող ստորգետնյա ավտոկայանատեղիում ավտոկանգառի գործունեություն իրականացնելու դեպքում մատուցվող ծառայության դիմաց գանձվող վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) մինչև մեկ ժամ, ինչպես նաև մեկ ժամից ավել կայանելու յուրաքանչյուր ժամի համար՝ 200 ՀՀ դրամ.

2) ժամը 24.00-ից (00.00-ից) մինչև 09.00-ն կայանելու համար՝ 500 ՀՀ դրամ՝ միանվագ վճարելու դեպքում.

3) 30-օրյա ժամանակահատվածում՝ ժամը 08.00-ից մինչև 20.00-ն կայանելու համար՝ 15000 ՀՀ դրամ (աբոնեմենտ).

4) 30-օրյա ժամանակահատվածում՝ ժամը 19.00-ից մինչև 09.00-ն կայանելու համար՝ 10000 ՀՀ դրամ(աբոնեմենտ).

5) 30-օրյա ժամանակահատվածում՝ շուրջօրյա կայանելու համար՝ 20000 ՀՀ դրամ(աբոնեմենտ):

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ.ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ
<ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N120-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻԻ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ> ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

<Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի հունիսի 18-ի N120-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և ազատության հրապարակի ստորգետնյա ավտոկայանատեղիի վճարների դրուքաչափերը սահմանելու մասին> ավագանու որոշման ընդունման կապակցությամբ սպասվում է Երևանի բյուջեի եկամուտների և ծախսերի փոփոխություններ:

Գ.ԲԵԳԼԱՐՅԱՆ